ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

24 սեպտեմբերի 2020 թվականի N ՏՊ-007-09/20

ք. Երևան

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից թողարկած անվանական արժեկտրոնային պարտատոմսերը տեղաբաշխման թույլատրելու մասին

Հիմք ընդունելով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Թողարկող) 2020 թվականի սեպտեմբերի 23-ի դիմումը Թողարկողի 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 72 ամիս շրջանառության ժամկետով, 8.5% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 190,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերը տեղաբաշխման թույլատրելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» Բաց բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Օպերատոր) Ցուցակման պատասխանատուի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 24-ի ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների» 17-րդ գլխի 98) կետով և Բորսայի կանոնադրությամբ 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ընկերության 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 72 ամիս շրջանառության ժամկետով, 8.5% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 190,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից շնորհվել է AMSWISB2FER5 ծածկագիրը, իսկ Օպերատորի կողմից՝ SWISBF հապավումը, թույլատրել տեղաբաշխման Օպերատորի տեղաբաշխման հարթակում:
2. Տեղաբաշխումը կազմակերպել ս.թ. սեպտեմբերի 28-ին՝ փակ ստանդարտ աճուրդի եղանակով՝ բացառելով գնման ոչ մրցակցային և լրիվ բավարարմամբ պայմաններով գնման հայտերի ներկայացումը տեղաբաշխման համակարգում:
3. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
4. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**